ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2001–2008 ԹԹ.

INTERSTATE RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND RUSSIAN FEDERATION IN 2001–2008

МЕЖГОСУДАРСТВЕННЫЕ ОТНОШЕНИЯ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИЕЙ В 2001–2008 ГГ.

Ռուբեն Ազիզբեկյան
Ruben Azizbekyan
Рубен Азизбекян

Պատմության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of History, National Academy of Sciences, Armenia
Институт истории, Национальная академия наук, Армения

ruben.azizbekyan@academhistory.am

Ներկայացվել է՝ 16.06.2025, գրախոսվել է՝ 02.04.2025, ընդունվել է՝ 12.08.2025
Received: 16.06.2025; Revised: 02.04.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 16.06.2025; рецензировано: 02.04.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-28

Ամփոփում – XXI դարի շեմին ծավալվող աշխարհաքաղաքական վերափոխումների համատեքստում Հայաստանի և Ռուսաստանի միջև հարաբերություններն աստիճանաբար ստացան իրատեսական բնույթ. դա արտահայտվում էր թե՛ կողմերի համընկնող շահերի բազմազանությամբ, և թե՛ նրանց միջև գոյություն ունեցող որոշակի տարակարծություններով: Այն տարածաշրջանում առկա աշխարհաքաղաքական իրողություններից բխող մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների հետևանք էր: Հատկանշական էր, որ պաշտոնական Երևանը, ելնելով ՀՀ ազգային անվտանգությանը Թուրքիայի կողմից սպառնալիքի գոյությունից, կարևորում էր Մոսկվայի հետ ռազմաքաղաքական գործակցության խորացումը: Մանավանդ որ տարածաշրջանում ՌԴ-ի քաղաքականությունն ընդհանուր առմամբ դրական համակարգային գործոններ էր ապահովում ՀՀ արտաքին քաղաքականության իրագործման համար: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ 2000-ականների սկզբներին ԱՊՀ վերածումը լիարժեք ինտեգրացիոն միավորման բախվում էր լուրջ խնդիրների, որից ելնելով՝ Մոսկվան շեշտը դնում էր հատկապես ՀԱՊԿ մասնակից պետությունների հետ երկկողմ հարաբերությունների զարգացման վրա: Հատկանշական էր, որ 2000-ականների առաջին տասնամյակում Հայաստանի արտաքին քաղաքականությունը հիմնվում էր Արևմուտքի և Ռուսաստանի, ինչպես նաև մյուս դերակատարների շահերի հավասարակշռման պահպանման վրա հենվող փոխլրացման քաղաքականության վրա, որը դժվար էր ընկալվում հանրապետության փորձագիտական

որոշ շրջանակների կողմից: Սեփական սահմանափակ ռեսուրսներով թուրքական սպառնալիքի չեզոքացման անհնարինության գիտակցումը Հայաստանին առավելապես մղում էր Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների խորացմանը՝ հանգեցնելով արտաքին հարաբերություններում ռուսական գործոնի աստիճանական գերակայության ամրապնդման: Վերջինս մեծապես պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ ՌԴ քաղաքականությունը հետխորհրդային տարածաշրջանում ածանցվում էր նաև այստեղ առկա հակամարտությունների, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում Մոսկվայի ազդեցիկ դերակատարության ստանձնումով:

Abstract – In the conditions of geopolitical transformations unfolding on the threshold of the 21st century, relations between Armenia and Russia gradually took on a realistic character, which was expressed both in the diversity of the parties' overlapping interests and in the presence of certain differences between them. The latter was a consequence of a number of objective and subjective factors arising from the geopolitical realities existing in the region. Against this background, it was noteworthy that official Yerevan, based on the existence of a threat to the national security of the Republic of Armenia from Turkey, emphasized the importance of deepening military-political cooperation with Moscow. Especially since the Russian Federation's policy in the region generally provided positive systemic factors for the implementation of the Republic of Armenia's foreign policy. This was due to the fact that in the early 2000s, the transformation of the CIS into a full-fledged integration union was facing serious problems, which is why Moscow emphasized the development of bilateral relations with the CSTO member states in particular. It was noteworthy that in the first decade of the 2000s, Armenia's foreign policy was based on a policy of complementarity based on maintaining a balance between the interests of the West and Russia, as well as other actors, which was difficult to perceive by some expert circles in the Republic. The realization of the impossibility of neutralizing the Turkish threat with its own limited resources increasingly pushed Armenia to deepen allied relations with Russia, leading to the gradual strengthening of the Russian factor in foreign relations. The latter was also largely conditioned by the fact that the Russian policy in the post-Soviet region was also derived from Moscow's influential role in the resolution of the existing conflicts here, including the Nagorno-Karabakh conflict.

Аннотация – В условиях развертывания глобальных преобразований начала 21-го века отношения между Арменией и Россией постепенно обрели прагматичный характер, что проявлялось как в многообразии совпадающих интересов, так и в существующих между ними некоторых разногласиях. Они были следствием определенных объективных и субъективных факторов, связанных с реалиями глобальных перемен в регионе. На этом фоне характерным было то, что официальный Ереван, исходя из существующей для безопасности РА угрозы со стороны Турции, придавал огромное значение углублению военно-политического сотрудничества с Москвой. Тем более, что политика РФ в регионе в основном обеспечивала позитивные системные факторы для осуществления внешней политики РА. Это было обусловлено тем обстоятельством, что в начале 2000-ых трансформирование СНГ в полноценный интеграционный союз сталкивалось с серьезными проблемами, исходя из чего Москва особенно акцентировала внимание на развитии двусторонних отношений с государствами – членами ОДКБ. Примечательно, что в первое десятилетие 2000-ых годов внешняя политика Армении базировалась на комплемен-

тарной политике, основу которой составляло равновесие интересов Запада, России и других акторов, что с трудом воспринималось определенными экспертными кругами республики. Осознание невозможности нейтрализации турецкой угрозы собственными ограниченными ресурсами побудило Армению пойти на углубление союзнических отношений с Россией, что привело к укреплению превосходства российского фактора во внешних отношениях. Это было обусловлено тем обстоятельством, что политика РФ на постсоветском пространстве была аффилирована с существующими здесь конфликтами, в том числе с влиятельной ролью в процессе решения проблемы Нагорного Карабаха.

Հիմնաբառեր – Հայաստան, Ռուսաստան, ռազմավարական, դաշնակցային, հարաբերություններ:
Keywords – Armenia, Russia, strategic, allied, relations.
Ключевые слова – Армения, Россия, стратегический, союзнический, отношения.

Ներածություն

2000-ականների սկզբներից հայ-ռուսական հարաբերությունները զարգանում էին միջազգային համակարգի կառուցվածքային որոշակի փոփոխությունների համատեքստում, որոնք մասնավորապես արտահայտվում էին նաև Հարավային Կովկասում հավաքական Արևմուտքի և Թուրքիայի ազդեցության ուժեղացմամբ՝ ի հաշիվ Ռուսաստանի: Վերջինով պայմանավորված՝ նշյալ թվականների առաջին տասնամյակում ՌԴ և ՀՀ արտաքին քաղաքականության հայեցակարգերում էական տեղաշարժեր արձանագրվեցին: ՌԴ նախագահ Բ. Ելցինին փոխարինած Վ.Պուտինը ձեռնամուխ եղավ ավելի ինքնուրույն ու բացառապես սեփական ազգային շահերի հիման վրա կառուցված արտաքին քաղաքական ուղեգծի որդեգրմանը՝ միջազգային հարաբերություններում առաջ մղելով բազմակենտրոն աշխարհակարգի կառուցման գաղափարը: Միաժամանակ, ՌԴ արտաքին քաղաքականությունը, բացի քաղաքական իրատեսությանը բնորոշ ավանդական շահերի հայեցակարգից, սկսեց հենվել նաև արժեքային և գաղափարական որոշակի սկզբունքների վրա (Գալստյան 2022, 55): Տվյալ ուղեգծի որդեգրումից հետո Ռուսաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշումն ընդգծված «եվրասիականության» երանգներ ձեռք բերեց: Մոսկվան հետխորհրդային տարածքում ակտիվորեն սկսեց քարոզել և իրականացնել ինտեգրացիոն նախագծեր: Եվ եթե ԱՊՀ-ն, որպես կառույց, վճռական դերակատարում չուներ գլոբալ համատեքստում, ապա ՀԱՊԿ և ԵՏՄ նախագծերը մասնակից պետությունների ներքին և արտաքին քաղաքական կյանքի առանցքային կողմնորոշիչներն էին ամփոփում (Ղևոնդյան 2020, 24 փետրվարի): Այս առումով հատկանշական էր, որ Կրեմլը ռազմաքաղաքական տեսանկյունից որպես իրեն դաշնակիցներ նախ և առաջ դիտարկում էր ՀԱՊԿ անդամ երկրներին (Ղևոնդյան 2024, 183): Փաստորեն, Ռուսաստանը, իր աշխարհաքաղաքական շահերին համահունչ, ՀՀ-ին ևս ներգրավել էր առաջնային դաշնակիցների շարքում, որը համապատասխանում էր Հայաստանի անվտանգային շահերին: Տվյալ համատեքստում ՀՀ արտաքին քաղաքականության մեջ ՌԴ-ն հատուկ տեղ էր գրավում, իսկ Հայաստանը Հարավային Կովկասում ստանձնել էր Ռուսաստանի տարածաշրջանային ռազմավարության միակ և բավական

ակտիվ գործընկերոջ դերը: 2001–2008 թթ. Երևանի համար Թուրքիան և Ադրբեջանը շարունակում էին մնալ Հայաստանի ազգային անվտանգության գլխավոր սպառնալիքներ, որն էլ վերջինիս դրդեց Ռուսաստանի և Իրանի հետ համագործակցության ամուր առանցքի ստեղծման: Միաժամանակ, Հայաստանի իշխանությունները ձգտում էին արտաքին քաղաքականության ոլորտում հանդես բերել առավել իրատեսություն և ճկունություն՝ խարսխված դեռևս 1990-ականների վերջերին սկիզբ առած փոխլրացման՝ այսինքն՝ կովկասյան տարածաշրջանին անմիջականորեն առնչվող ռազմաքաղաքական տարբեր դաշինքների և պետությունների միջև հավասարակշռություն պահպանելու սկզբունքի հիման վրա: Հետագայում տվյալ ուղեգիծն ամրագրվեց արտաքին քաղաքականության հայեցակարգում, ըստ որի՝ Հայաստանը ռազմական ոլորտում փոխգործակցում էր ոչ միայն առանձին պետությունների, այլև ակտիվորեն համագործակցում միջազգային և տարածաշրջանային անվտանգային կառույցների հետ: Սակայն քննվող ժամանակափուլում ՀՀ-ի՝ միայն ՌԴ-ի հետ հարաշարժորեն զարգացող հարաբերություններն էին կրում ռազմավարական դաշնակցային բնույթ:

Ռազմաքաղաքական փոխգործակցության խորացումը

XXI դարի սկզբին հայ-ռուսական ռազմաքաղաքական հարաբերությունները թևակոխեցին որակապես նոր փուլ: 2000 թ. սեպտեմբերի 26-ին Մոսկվայում ՀՀ և ՌԴ նախագահներ Ռ. Քոչարյանը և Վ. Պուտինը ստորագրեցին «ՀՀ և ՌԴ միջև XXI դար ուղղված դաշնակցային փոխգործակցության մասին» հռչակագիրը (Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 18–19): Վերջինով Մոսկվան ու Երևանն ազդարարեցին միմյանց միջև հարաբերությունները դաշնակցային մակարդակի հասցնելու մասին: Չնայած դրան, խնդրո առարկա ժամանակափուլում հայկական կողմը ՌԴ-ի նկատմամբ ժամանակ առ ժամանակ խուսափում էր օգտագործել «դաշնակից» կամ «դաշնակցային հարաբերություններ» եզրույթները. դա, ըստ երևույթին, պայմանավորված էր Արևմուտքի հետ հարաբերությունները չվատթարացնելու նկատառումով: Պաշտոնական Երևանը Ռուսաստանին առավելապես անվանում էր «ռազմավարական գործընկեր»՝ ռուսաստանյան կողմի մեջ առաջացնելով որոշակի տարակուսանք (Александров 2010, 425): Փաստորեն, XXI դ. առաջին տասնամյակում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև դաշնակցային հարաբերություններում գոյություն ունեին տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված որոշ տարակարծություններ:

Ընդհանուր առմամբ, 2001–2008 թթ. հայ-ռուսական հարաբերություններն առաջին հերթին բնորոշվում էին անվտանգության բնագավառում բավական ակտիվ և արդյունավետ համագործակցությամբ: 2000-ականներից սկսած՝ Ռուսաստանի նախաձեռնությամբ սկիզբ առավ Երևանն աստիճանաբար ԱՊՀ ոչ պաշտոնական կենտրոններից մեկը դարձնելու գործընթացը: 2001 թ. առաջին կեսին Հայաստանի մայրաքաղաքում տեղի ունեցան ԱՊՀ-ի շրջանակում բարձր մակարդակի մի շարք համաժողովներ: Հատկապես կարևոր էր 2001 թ. մայիսին Երևանում ՌԴ նախագահ Վ. Պուտինի ղեկավարությամբ կայացած

Հավաքական անվտանգության խորհրդի (ՀԱԽ) նիստը, որտեղ ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը մեկ տարով ընտրվեց այդ խորհրդի նախագահող: 2001 թ. հոկտեմբերի 3-ին ՌԴ 102-րդ ռազմակայանի և Հայաստանի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցները, Ռուսաստանի ռազմական ավիացիոն խմբավորումն ու զենիթահրթիռային գունդն անցան շուրջօրյա համատեղ հերթապահության, ինչը բարձրացրեց ՀՀ անվտանգային մակարդակը (Минасян 2005, 8 июня): 2001 թ. ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարները ստորագրեցին համաձայնագրեր Ռուսաստանից Հայաստան գործուղվող ռազմական խորհրդականների և մասնագետների կարգավիճակի, Հայաստանում տեղակայված ռուսաստանյան 102-րդ ռազմակայանի գործունեության հետ կապված անշարժ օբյեկտների փոխադարձորեն փոխանցման մասին (История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября), որոնք լրացնում էր ՀՀ Ազգային ժողովի կողմից 2003 թ. սեպտեմբերին վավերացված ռազմական օբյեկտների համատեղ օգտագործման հարցերը կարգավորող հայ-ռուսական համաձայնագիրը (Ազիզբեկյան 2019, 209): Ըստ վերջինի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղակայման համար վարձավճար չէր գանձվելու, բացի այդ, փոխհատուցվելու էր էներգիայի և ջրամատակարարման ենթակառուցվածքի պահպանման համար ռազմակայանի օբյեկտների ծախսերի 30%-ը (Шакарянц 2002, 100, 103, Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 2010, 11–12): ՀՀ հանրության որոշ շրջանակներ այս ամենը որակեցին որպես ոտնձգություն հանրապետության ինքնիշխանության նկատմամբ:

2003 թ. հունվարին երկու երկրների միջև ստորագրվեց ռազմատեխնիկական համագործակցության մասին համաձայնագիրը, որով Հայաստանին հնարավորություն ընձեռվեց զենքի մատակարարումների վերաբերյալ պայմանագրեր կնքելու անմիջականորեն զինամթերք արտադրող ռուսաստանյան ձեռնարկությունների հետ՝ ՌԴ զինված ուժերին տրամադրվող նույն արտոնյալ պայմաններով: Ռազմատեխնիկական բնագավառում փոխգործակցության խորացման համար կարևոր նշանակություն ունեցավ տվյալ ոլորտում համագործակցության հայ-ռուսական միջկառավարական հանձնաժողովի ստեղծումը, որի անդրանիկ նիստը կայացավ 2004 թ. սեպտեմբերին (Ազիզբեկյան 2019, 210): 2003–2008 թթ. Ռուսաստանից Հայաստան ռազմական նշանակության ապրանքների մատակարարումների ծավալը կազմեց շուրջ 25 մլն ԱՄՆ դոլար (Ռուսական կապիտալը Հայաստանի լոկոմոտիվն է 2008, 22 հունվարի):

Զուգահեռաբար Ռուսաստանը զենք էր վաճառում նաև Ադրբեջանին՝ ընդ որում, ավելի մեծ քանակով: Նույն 2003 թ. ՌԴ-ի և Ադրբեջանի միջև ևս կնքվեց ռազմատեխնիկական համագործակցության մասին համաձայնագիր, որից հետո Բաքուն ավելի մեծ ծավալի զինտեխնիկա սկսեց ներմուծել Ռուսաստանից: Վերջինս իր որդեգրած նման քաղաքականությունը նախ և առաջ փորձում էր ներկայացնել Ղարաբաղյան հակամարտության կողմերի միջև ռազմատեխնիկական հավասարակշռության պահպանման անհրաժեշտությամբ, ինչպես նաև սեփական «բիզնես շահի» ապահովման տեսանկյուններից: Մոսկվայի

նման պահվածքը լրջորեն մտահոգում էր Հայաստանին, քանի որ այն չէր համապատասխանում հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունների ոգուն (Ղևոնդյան 2024, 156, 157, 159): Մինչդեռ Ռուսաստանը, ելնելով իր աշխարհաքաղաքական և հատկապես տնտեսական շահերից, ձգտում էր Ադրբեջանի հետ ամեն գնով պահպանել բարիդրացիական հարաբերություններ, որոնք 2000-ականների երկրորդ տասնամյակի սկզբներին ձևակերպվեցին որպես դաշնակցային փոխգործակցություն (Ազիզբեկյան 2024, 14, 15): Ռուսաստանի և Ադրբեջանի միջև սերտ համագործակցությունը Հայաստանում որոշ շրջանակներ օգտագործում էին հայ-ռուսական հարաբերությունները վարկաբեկելու նպատակով՝ հանգեցնելով բնակչության շրջանում հակառուսական տրամադրությունների աճին: Հատկանշական էր, որ ՌԴ-ի համար, թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի ունեցած կարևոր աշխարհաքաղաքական նշանակությամբ պայմանավորված, Մոսկվայի կողմից իրականացվող հավասարակշռության պահպանման քաղաքականությունը դրսևորվում էր նաև ԼՂ հակամարտության ընթացում: Մասնավորապես, 2020 թ. սեպտեմբերին՝ Թուրքիայի աջակցությամբ Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա զավթողական պատերազմի ժամանակ, Ռուսաստանը, խուսափելով ագրեսորին դատապարտելուց, հիմնականում սահմանափակվեց պատերազմի կանգնեցմանը նպատակամիտված ակտիվ միջնորդի դերի ստանձնմամբ: Նոյեմբերի 9-ին, երբ Բաքուն զավթել էր Լեռնային Ղարաբաղի մի մասը, ստորագրվեց հիմնականում ՌԴ-ի կողմից մշակված եռակողմ հայտարարություն:

2000-ականների առաջին տասնամյակում ՀՀ-ն իր որդեգրած փոխլրացման քաղաքականությունը հաջողությամբ իրականացնում էր Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ-ի) հետ հարաբերությունների զարգացման գործում: Այստեղ հայկական կողմը, հանդես բերելով հավասարակշռվածություն, ձգտում էր դրանք կառուցել Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական գործընկերության խնդիրներից ելնելով: Երևանը, խորացնելով Բրյուսելի հետ գործնական հարաբերությունները ժողովրդավարության, խաղաղապահ գործողությունների, գիտության և այլ ոլորտներում, չէր ձեռնարկում ՆԱՏՕ-ին անդամագրվելու գործնական քայլեր: ՀՀ իշխանությունները մշտապես շեշտում էին ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը օրակարգում դրված չլինելու և Դաշինքի հետ հարաբերությունները երբեք Ռուսաստանի հետ համագործակցության հաշվին չզարգացնելու մասին: Փաստորեն, փոխլրացման քաղաքականությունը Հայաստանին թույլ էր տալիս որոշակի հավասարազոր հեռավորություն պահպանել աշխարհաքաղաքական հիմնական կենտրոններից՝ միաժամանակ խորացնելով ջանքերը դրանց հետ համագործակցելու ուղղությամբ (Գալստյան 2022, 53): Ռուսաստանը հիմնականում ըմբռնումով էր վերաբերվում Հայաստանի և ՆԱՏՕ-ի միջև ծավալված համագործակցությանը, որը հիմնականում պայմանավորված էր ՌԴ-ի՝ ևս մի շարք բնագավառներում համագործակցությամբ ՆԱՏՕ-ի հետ: Միաժամանակ, Մոսկվան երբեմն դժգոհություն էր հայտնում միջազգային ասպարեզում Հայաստանի ձեռնարկած որոշ քաղաքական քայլերից՝ ինչպես, օրինակ, երբ 2004 թ. ՄԱԿ-ի ԳԱ 59-րդ նստաշրջանում հայկա-

կան կողմը խոստացավ աջակցել Գերմանիային, Ճապոնիային և Հնդկաստանին այդ կազմակերպության Անվտանգության խորհրդում մշտական անդամ դառնալու վերջիններիս ձգտումներին: ՌԴ-ն իր մտահոգությունն արտահայտեց նաև այն ժամանակ, երբ ՀՀ ղեկավարությունը 2005 թ. մտադրություն հայտնեց 40-հոգանոց ոչ մարտական զինվորական քանակակազմ ուղարկել Իրաք, որը ձեռնարկվել էր առանց Մոսկվայի հետ խորհրդակցելու (Александров 2010, 431): Սակայն նման տարակարծությունները լրջորեն չէին անդրադառնում հայ-ռուսական ռազմավարական դաշնակցային հարաբերությունների վրա: Արտաքին քաղաքականության բնագավառում երկուստեք հետաքրքրություն ներկայացնող խնդիրների քննարկման նպատակով ՀՀ և ՌԴ համապատասխան գերատեսչությունների միջև կանոնավոր անցկացվում էին տարբեր մակարդակների խորհրդատվություններ: Հայաստանի և Ռուսաստանի հարաբերությունների ռազմավարական դաշնակցային բնույթն արտահայտվում էր ոչ միայն երկկողմ համագործակցությամբ, այլև անվտանգության և տնտեսության ոլորտներում իրականացվող ինտեգրման գործընթացներով:

Այսպիսով, 2001–2008 թթ. ՌԴ-ի հետ ռազմավարական դաշնակցային գործընկերությունը մնում էր ՀՀ ազգային անվտանգության գլխավոր գերակայություններից մեկը: Դա ակնբախորեն արտահայտվում էր 2007 թ. փետրվարի 7-ին ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ, որում շեշտվում էր Ռուսաստանի՝ Հայաստանի անվտանգության ապահովման երաշխավոր լինելը, և միայն ՌԴ-ի հետ էր հռչակվում ռազմավարական դաշնակցային փոխգործակցություն (Стратегия национальной безопасности Республики Армения 2007, 49):

Առևտրատնտեսական հարաբերությունների ընդլայնումը

2001–2008 թթ. Հայաստանն ու Ռուսաստանը ակտիվորեն ձեռնամուխ եղան միմյանց միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման ակտիվացմանը, որի մակարդակն ակնհայտորեն զիջում էր ռազմաքաղաքականին՝ չհամապատասխանելով ռազմավարական դաշնակցային գործընկերության նշաձողին: Այս առումով կարևոր նշանակություն ունեցան 2001 թ. սեպտեմբերի 15-ին Երևանում ստորագրված «ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին» պայմանագիրն ու «ՀՀ և ՌԴ միջև մինչև 2010 թ. երկարաժամկետ տնտեսական համագործակցության» ծրագիրը (ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999–2001 թթ. 2002, 372–377): Վերջինիս իրականացումը զգալիորեն նպաստեց երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների խթանմանը: 2000-ականների կեսերից ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տարեցտարի աճում էին առևտրաշրջանառության ծավալները՝ 2004 թ. 208 մլն ԱՄՆ դոլարից 2007 թ. հասնելով 704 մլն ԱՄՆ դոլարի, որի շնորհիվ 2007 թ. Ռուսաստանին բաժին էր ընկնում հանրապետության արտաքին առևտրի 16%-ը (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, 123):

2000-ականների առաջին տասնամյակում հայ-ռուսական տնտեսական հարաբերությունների առանձնահատկություններից էր Հայաստանի տնտեսության հատկապես ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներ ռուսական կապիտալի ներթափանցման գործընթացի ծավալումը: Շուտով Ռուսաստանը զբաղեցրեց Հայաստանի տնտեսության մեջ խոշորագույն օտարերկրյա ներդրողի դիրքերը էներգետիկ, բանկային, մետալուրգիական, տրանսպորտի, կապի, շինարարության և այլ ոլորտներում: 2008 թ. ՌԴ-ի՝ ընդհանուր առմամբ ՀՀ-ում կատարած ներդրումների ծավալը հասավ շուրջ 3 մլրդ ԱՄՆ դոլարի (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ. հունվար-դեկտեմբերին, 125): Նույն թվականին Հայաստանում արդեն գործում էր ռուսական կապիտալով ավելի քան 1000 ձեռնարկություն, որը օտարերկրյա կապիտալով հանրապետությունում գործող ձեռնարկությունների ավելի քան 25%-ն էր (Министерство экономического развития Российской Федерации, справка по Республике Армения 2008, 15 сентября): Սակայն Հայաստանի տնտեսության ենթակառուցվածքների մեջ ռուսական կապիտալի ներթափանցման ուժեղացումն առաջացնում էր հանրության որոշ շերտերի դժգոհությունը, քանի որ ըստ նրանց՝ դրանով մեծանում էր առավելապես Ռուսաստանից ՀՀ տնտեսական կախվածությունը՝ նպաստելով հանրապետության ինքնիշխանության սահմանափակմանը (Մարտիրոսյան 2012, 28 փետրվարի): Մինչդեռ Հայաստանում ներդրումներ կատարող այլ օտարերկրյա ընկերությունները, ի տարբերություն ռուսականների, այնքան էլ շահագրգռված չէին այստեղ խոշորածավալ ներդրումներ իրականացնելու:

ՀՀ-ում լուրջ տարակարծություններ առաջացրեց նաև երկու երկրների միջև 2002 թ. նոյեմբերին կնքված «Գույք պարտքի դիմաց» անվանմամբ միջկառավարական համաձայնագիրը, որով հիմնականում միջուկային վառելիքի և գազի մատակարարումներից գոյացած՝ Հայաստանի 100 մլն դոլարի պարտքի դիմաց Ռուսաստանին փոխանցվեց հայաստանյան 5 գիտաարդյունաբերական ձեռնարկություն (Բալասանյան 2022, 47): Թեև ՀՀ իշխանություններն այդ գործարքը համարեցին հաջողված, քանի որ, ըստ նրանց, այն հնարավորություն էր ընձեռում ոչ միայն հանրապետությունն ազատելու արտաքին պարտքի առավել ծանրաբեռնված բաժնից, այլև ՌԴ-ին դարձնելով ներդրող՝ պահպանելու տվյալ ձեռնարկությունները, որոնք հարկեր էին վճարելու և ստեղծելու էին նոր աշխատատեղեր (Քոչարյան 2021, 11 հունիսի): Մինչդեռ նրանց ընդդիմախոսների կարծիքով՝ այն Հայաստանում Ռուսաստանի տնտեսական էքսպանսիայի ցայտուն դրսևորում էր և վկայում էր հանրապետության արտաքին հարաբերությունների միաբևեռության խորացման մասին: Ուշագրավ էր, որ նշյալ գործարքը ՌԴ-ում ևս տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվեց:

Քննվող ժամանակափուլում փոխգործակցության զգալի առաջընթաց գրանցվեց հատկապես վառելիքաէներգետիկ բնագավառում: 2006 թ. մարտին ՀՀ կառավարության և «Գազպրոմ» ԲԲԸ-ի միջև 25 տարով կնքվեց Հայաստանի տարածքում գազաէներգետիկ նախագծերում համագործակցության ռազմավարական սկզբունքները սահմանող համաձայնագիրը: Ըստ վերջինի՝ Ռուսաստանից մատակարարվող բնական գազի գինը մինչև 2009 թ. հունվարի 1-ը 1000 խմ

համար սահմանվեց 110 ԱՄՆ դոլար, որը զգալիորեն էժան էր միջազգային շուկայում գործող գներից: Առաջնորդվելով նշյալ համաձայնագրով՝ ռուսաստանյան գազային կոնցեռնը հետագա երեք տարիներին շուրջ 550 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ կատարեց՝ ներառյալ Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության ավարտի և Իրան-Հայաստան գազամուղի շինարարական աշխատանքների համար (Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում 2010, 33): Վերջինիս առնչությամբ շրջանառվում էին տարբեր նախագծեր՝ նշյալ գազամուղի կառուցումը Վրաստանով մինչև Ուկրաինա, այնուհետև դեպի ԵՄ երկրներ շարունակելու վերաբերյալ, որոնք կյանքի կոչելը ՀՀ-ի համար թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական առումներով խիստ շահեկան կարող էր լինել: Սակայն դա հարուցեց Մոսկվայի անհանգստությունը, քանի որ հայ-իրանական խողովակաշարը ոչ միայն կարող էր ռուս-թուրքական «Կապույտ հոսք» գազամուղի մրցակիցը դառնալ, այլև, Ռուսաստանին շրջանցելով, իրանական գազի առաքումը դեպի Եվրոպա կսասաներ նաև «Գազպրոմի» դիրքերը միջազգային շուկայում: Ուստի, վերոնշյալ նախագծերը ռուսական կողմի լուրջ հակազդեցության հետևանքով իրականություն չդարձան: Ավելին, հայկական կողմը Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի հետ մեկտեղ «ՀայՌուսգազարդին» փոխանցեց Իրան-Հայաստան գազամուղի 40 կմ-անոց հայկական առաջին հատվածը: ՀՀ կառավարությունը պարտավորվեց նաև «ՀայՌուսգազարդին» տրամադրել Իրան-Հայաստան գազամուղի երկրորդ՝ 197 կմ-անոց հատվածի շինարարության պատվիրատուի գործառույթները (ՀայՌուսգազարդը» կդառնա Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի և Իրան-Հայաստան գազամուղի սեփականատեր, 2006, 6 ապրիլի): 2007 թ. սկզբին «Գազպրոմի» մասնաբաժինը «ՀայՌուսգազարդի» հիմնադիր կապիտալում գրեթե կրկնապատկվեց՝ կազմելով որակական մեծամասնություն: 2002 թ. «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ռուսաստանյան ընկերությունը «Գույք պարտքի դիմաց» ծրագրի շրջանակում ձեռք բերեց Հրազդանի ՋԷԿ-ը (Բալասանյան 2022, 47): Միաժամանակ, նշյալ ընկերությունը 5 տարի ժամկետով ստանձնեց Հայկական ատոմակայանի հավատարմագրային կառավարումը, ընդ որում, ատոմակայանի գործարկումից ստացված շահույթի 75%-ը «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ»-ը պարտավորվում էր փոխանցել ՀՀ կառավարությանը (Սուքիասյան 2020, 64): Նույն ընկերությունը 2006 թ. դարձավ Հայաստանի միասնական բաշխիչ էլեկտրացանցի սեփականատերը: Երկու երկրները սերտորեն համագործակցում էին նաև միջուկային էներգիայի ոլորտում, որն իրականացվում էր «Ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին» 2000 թ. սեպտեմբերի 25-ի միջկառավարական համաձայնագրի շրջանակում, և որի հիմնական ուղղություններն էին Հայկական ԱԷԿ-ի անվտանգ շահագործման ապահովումն ու ատոմակայանին թարմ միջուկային վառելիքի մատակարարումը (ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999–2001 թթ. 2002, 242–245): Փաստորեն, 2000-ականների առաջին տասնամյակում Հայաստանի էներգետիկ համակարգի շուրջ 90%-ը կառավարվում էր Ռուսաստանի կողմից, որը հանրապետության քաղաքական և տնտեսական շրջանակներում ոչ միանշանակորեն

էր ընդունվում: Տվյալ շրջանակների ընդդիմախոս հատվածների ներկայացուցիչների համար մտահոգիչ էր, որ հանրապետության գրեթե ողջ էներգահամակարգը պատկանում էր միայն մեկ երկրի, ինչը, ըստ իրենց, բարդացնում էր էներգակիրների ներմուծման բազմազանեցման քաղաքականության իրականացումը՝ խոչընդոտելով հանրապետության լիարժեք էներգետիկ անվտանգության ապահովման ուժեղացումը:

2001–2008 թթ. ՀՀ-ի և ՌԴ-ի միջև մեծ թափով զարգանում էր համագործակցությունը ֆինանսաբանկային և կապի ու հեռահաղորդակցության ոլորտներում: Առաջինը նպաստեց Հայաստանի ֆինանսաբանկային համակարգի կատարելագործմանն ու գործառույթների արդյունավետության բարձրացմանը, իսկ երկրորդը՝ հանրապետությունում բջջային կապի բաժանորդների թվի զգալի ավելացմանն ու նոր աշխատատեղերի բացմանը:

Քննվող ժամանակաշրջանում կարևոր նշանակություն ուներ հայ-ռուսական համագործակցությունը տրանսպորտի ոլորտում: Հայաստանը Ռուսաստանի հետ կապող միակ ցամաքային ճանապարհը վրաց-ռուսական սահմանագծին գտնվող «Կազբեկ-Վերին Լարս» ավտոմոբիլային անցակետն էր, որը 2000-ականներից սկիզբ առած վրաց-ռուսական հարաբերություններում աստիճանաբար աճող լարվածության հետևանքով մերթ մեկ, մերթ մյուս կողմի նախաձեռնությամբ պարբերաբար փակվում էր՝ բարդ իրավիճակ առաջացնելով Հայաստանի տնտեսության համար: ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հաղորդակցային ոլորտում առկա խնդիրները կողմերին հարկադրում էին համատեղ ջանքեր գործադրել միմյանց միջև նոր տրանսպորտային երթուղիների բացման ուղղությամբ: Առաջինը՝ Նովոռոսիյսկ-Փոթի երկաթուղալաստանավային անցուղին էր, որով իրականացվում էին նաև բեռնարկղներով փոխադրումներ: 2007 թ. սկսեցին գործարկվել նաև Նովոռոսիյսկ-Փոթի ավտոմոբիլալաստանավային և Փոթի-Կավկազ (Ռուսաստան) երկաթուղալաստանավային անցուղիները: Արդյունքում՝ նշյալ թվականին հայ-ռուսական լաստանավային փոխադրումների ծավալը գերազանցեց 30 հազ. տոննան (Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լոկոմոտիվն է, 2008, 22 հունվարի): ՀՀ-ի և ՌԴ-ի միջև տրանսպորտային հաղորդակցությունն ամրապնդելու և Հայաստանի երկաթուղային համակարգը զարգացնելու առումներով կարևոր նշանակություն ունեցավ «Հայկական երկաթուղային ուղիներ» ՓԲԸ 30 տարով հավատարմագրային կառավարման իրավունքի համար 2007 թ. հայտարարված միջազգային մրցույթում «Ռուսաստանյան երկաթուղային ուղիներ» ԲԲԸ-ի հաղթանակը (Ազիզբեկյան 2017, 201): Բացի տնտեսության ռազմավարական ճյուղերում ծավալված արդյունավետ համագործակցությունից, քննվող ժամանակափուլում հայ-ռուսական տնտեսական փոխգործակցությունը հաջողությամբ զարգանում էր նաև այլ բնագավառներում:

Այսպիսով, խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ-ռուսական առևտրատնտեսական հարաբերությունները երկու երկրների միջև քաղաքական համագործակցության կարևորագույն բաղկացուցիչ էին: Մոսկվան գիտակցում էր, որ Հարավային Կովկասում հուսալի գործընկեր ունենալու համար, բարձր մակարդակի ռազմաքաղաքական հարաբերություններից զատ, անհրաժեշտ է ունենալ

նաև լուրջ տնտեսական ներուժ: Իր հերթին, Հայաստանում Ռուսաստանի ծանրակշիռ տնտեսական ներկայությունը Երևանը դիտարկում էր որպես հանրապետության համար տարածաշրջանային անվտանգության կարևոր գործոն:

Եզրակացություններ

XXI դարում արագորեն գլոբալիզացվող աշխարհում միջազգային հարաբերությունների կառուցման հիմքում սկսեց դրվել իրատեսությունը, որը դրսևորվեց նաև 2001–2008 թթ. ՀՀ-ի և ՌԴ-ի միջև հարաբերություններում: Այդ ժամանակափուլում վերջիններս սրընթաց վերելք ապրեցին՝ հասնելով ռազմավարական գործընկերության մակարդակի, որը բնորոշվում էր հատկապես անվտանգության և տնտեսական բնագավառներում բավական ակտիվ և արդյունավետ համագործակցությամբ: Երևանը շարունակում էր Մոսկվայի հետ ռազմաքաղաքական համագործակցությունը դիտարկել որպես իր պաշտպանական և անվտանգության քաղաքականության առանցքային տարր: Այս լույսի ներքո Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ Ռուսաստանը հատուկ տեղ էր գրավում: Թերևս քաղաքական իրատեսությամբ էր պայմանավորված, որ ՌԴ-ի՝ ՀՀ անվտանգության գլխավոր երաշխավորը լինելու պարագայում Երևանն իրականացնում էր փոխլրացման արտաքին քաղաքականություն: Սակայն հայ հանրության մեծ մասը բացարձակապես համոզված էր արտաքին քաղաքականության ոլորտում ռուսաստանյան վեկտորի գերակայության մեջ: Ռուսաստանը, ելնելով սեփական աշխարհաքաղաքական և հատկապես տնտեսական շահերից, բավական սերտ հարաբերություններ էր պահպանում ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Թուրքիայի հետ, ինչը նրան հիմք էր տալիս, խուսանավելով հայ-ադրբեջանական հակամարտությունում որևէ մեկի կողմը բռնելուց, ստանձնել միջնորդի դեր: Դա որոշակի կասկածներ էր առաջացնում հայ-ադրբեջանական հակամարտությունը կարգավորելու ՌԴ-ի անկեղծ ձգտման նկատմամբ, քանի որ, լինելով մշտական միջնորդի դերում, Մոսկվան իրենից կախվածության մեջ էր պահում թե՛ Երևանին և թե՛ Բաքվին: Մինչդեռ հայ հանրության զգալի մասի համար Ռուսաստանը հիմնականում ընկալվում էր ոչ թե որպես միջնորդ, այլ դաշնակից՝ արցախահայության անվտանգության և ՀՀ սահմանների անձեռնմխելիության ապահովման հարցերում (Դարբինյան 2025, 21 փետրվարի): Վերջինիս առումով և՛ Հայաստանում, և՛ Ռուսաստանում գերակշռում էր կարծիք, թե Երևանն ավելի շահագրգիռ է իր տարածքում ռուսական ռազմական ներկայությամբ, քան Մոսկվան: Սակայն Գյումրիում ռուսաստանյան ռազմակայանը թերևս պակաս կարևոր չէր նաև ՌԴ-ի համար, քանի որ նրա հնարավոր դուրսբերումը տարածաշրջանից կհանգեցներ Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության կարևորագույն գործիքի կորստին: Առաջացած վակուումը կարող էր լրացվել այլ պետության ռազմական զորամիավորումով, որն էլ մեծապես կթուլացներ ՌԴ-ի դիրքերը տարածաշրջանում (Ղևոնդյան 2024, 162–163): Ինչ վերաբերում էր այն տեսակետին, թե ՌԴ 102-րդ ռազմակայանը ԼՂ-ի վրա Ադրբեջանի հնարավոր հարձակումը զսպող գործոն էր, ապա դա հերքվեց 2020 թ. 44-օրյա պատերազմի ժամանակ, երբ Լեռնային

Ղարաբաղը պաշտպանելու հանձնառությունը երբևիցե չստանձնած Ռուսաստանը, ըստ էության, որևէ գործնական քայլ չձեռնարկեց արցախահայությանը ադրբեջանաթուրքական ագրեսիայից պաշտպանելու ուղղությամբ: ՌԴ-ն դաշնակցին հարիր աջակցություն չցուցաբերեց նաև Հայաստանին՝ վերջինիս տարածքային ամբողջականությունը պահպանելու հարցում, երբ 2021–2022 թթ. Ադրբեջանի զինուժի կողմից բռնազավթվեց շուրջ 140 քառ. կմ ՀՀ ինքնիշխան տարածք (Մուշեղյան 2023, 28 ապրիլի): Դա Հայաստանում օգտագործվեց հանրության մեջ հակառուսական հռետորաբանության խորացման համար՝ հանգեցնելով Երևանի և Մոսկվայի միջև լարվածության ուժեղացման: Վերադառնալով 2001–2008 թվականներին, նշենք, որ Ռուսաստանի հետ Հայաստանի համապարփակ համագործակցության խորացումը հայ հանրության որոշ հատվածի կողմից աստիճանաբար սկսեց ընկալվել իբրև մարտահրավեր ՀՀ ազգային ինքնիշխանությանը: Նման մոտեցումը սնուցվում էր նաև ռուսաստանյան տարբեր շրջանակների կողմից մերթընդմերթ հրապարակ նետվող սադրիչ հայտարարություններով և չհաշվարկված ոչ ճշգրիտ քայլերով: Դրանց գումարվում էին նաև հայ հանրության առանձին շերտերի դյուրամիտ հույսերը, թե, ՌԴ-ի հետ դաշինքից հրաժարվելով, հանրապետությունը շատ արագ կկարողանա ինտեգրվել եվրոպական կառույցներին: Այս ամենը նպաստում էր Հավաքական Արևմուտքի կողմից Հայաստանում հակառուսական տրամադրությունների ընդլայնմանն ու դրանք հակառուսական հենահարթակ դարձնելու ձգտումների ակտիվացմանը, որոնք իրենց գագաթնակետին հասան 2020-ականների առաջին կեսին: Մինչդեռ իր բոլոր թերություններով հանդերձ՝ Ռուսաստանը պատմականորեն եղել է Հայաստանի անվտանգության հիմնական երաշխավորը: Թեև Մոսկվայի ձախողումների վերաբերյալ դժգոհությունները հիմնավոր են, սակայն ՌԴ-ի հետ ռազմավարական դաշնակցային հարաբերությունների վերանայումը, առանց համարժեք այլընտրանքների ապահովման, կարող է ՀՀ-ի համար ունենալ ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական լուրջ հետևանքներ:

Շնորհակալական

Սույն հոդվածը գրելու ընթացքում տրամադրած օգտակար նյութերի և արժեքավոր խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում պատմաբան Վ. Հովակիմյանին:

Գրականություն/Referenses/Литература

1. Ազիզբեկյան Ռ. 2017, ՀՀ և ՌԴ միջև առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորումն ու զարգացումը 1991–2008 թթ., Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), N 18, 184–206:
2. Azizbekyan R. 2017, The Origin and Development of Trade and Economic Relations between the Republic of Armenia and the Russian Federation in 1991–2008, Issues of Armenian History (Collection of Scientific Articles), N 18, 184–206 (in Armenian).

3. Ազիզբեկյան Ռ. 2024, Միջպետական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև 1992–2000 թթ., Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 9–28:
Azizbekyan R. 2024, Interstate Relations between the Republic of Armenia and the Russian Federation 1992–2000, Herald of Social Sciences, N 2, 9–28 (in Armenian).

4. Ազիզբեկյան Ռ. 2019, ՀՀ և ՌԴ միջև ռազմաքաղաքական համագործակցության սկզբնավորումն ու զարգացումը 1991–2008 թթ., Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), N 20, 191–220:
Azizbekyan R. 2019, The Origin and Development of Military-Political Cooperation between the Republic of Armenia and the Russian Federation in 1991–2008, Issues of Armenian History (Collection of Scientific Articles), N 20, 191–220 (in Armenian).

5. Բալասանյան Գ. 2022, Հայ-ռուսական բազմակողմ համագործակցությունը և եվրասիական ինտեգրման առաջնահերթությունները, Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն (Հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», 44–50:
Balasanyan G. 2022, Armenian-Russian Multilateral Cooperation and the Priorities of Eurasian Integration, Armenia-Russia: Friendship, Cooperation and Mutual Assistance (Collection of Articles), Yerevan, Nahapet, 44–50 (in Armenian).

6. Գալստյան Խ. 2022, Հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հարացուցային տեղաշարժերը, Հայաստան-Ռուսաստան. բարեկամություն, համագործակցություն և փոխադարձ օգնություն (Հոդվածների ժողովածու), Երևան, «Նահապետ», 51–55:
Galstyan Kh. 2022, The Historical Shifts in Armenian-Russian Diplomatic Relations, Armenia-Russia: Friendship, Cooperation and Mutual Assistance (Collection of Articles), Yerevan, Nahapet, 51–55 (in Armenian).

7. Դարբինյան Ա. 2025, Հայաստանը և Ռուսաստանը պետք է սթափ նայեն պատմությանը, ներկային և ապագային, 21 փետրվարի, https //mediamax.am/am/news/foreig npolisy/57028/?fbcild (ներբեռնման օրը՝ 12.03.2025):
Darbinyan A. 2025, Armenia and Russia should look soberly at History, Present and Future, February 21, https//mediamax.am/am/news/foreignpolicy/57028/?fbcild (Accessed on: 12.03.2025) (in Armenian).

8. «ՀայՌուսգազարդ»-ը կդառնա Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի և Իրան-Հայաստան գազամուղի սեփականատեր 2006, 6 ապրիլի, www.panarmenian.net (ներբեռնման օրը՝ 12.03.2025):
"ArmRusgazprom" will become the Owner of the 5th Power Unit of the Hrazdan Thermal Power Plant and the Iran-Armenia Gas Pipeline 2006, April 6, www.panarmenian.net (Accessed on: 12.03.2025) (in Armenian).

9. ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999–2001 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, N 3/3, 12 հունիսի:
Collection of International Treaties of the Republic of Armenia 1999–2001 2002, Official Bulletin of the Ministry of Foreign Affairs of the Republic of Armenia, N 3/3, June 12.

10. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2007 թ. հունվար-դեկտեմբերին, www.armstat.am (ներբեռնման օրը՝ 10.03.2025):
Socioeconomic Situation of the Republic of Armenia in January-December 2007, www.armstat.am (Accessed on: 10.03.2025) (in Armenian).

11. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008 թ. հունվար-դեկտեմբերին, www.armstat.am (ներբեռնման օրը՝ 10.03.2025):
Socioeconomic Situation of the Republic of Armenia in January-December 2008, www.armstat.am (Accessed on: 10.03.2025) (in Armenian).

12. Ղևոնդյան Ա. 2024, ՀՀ-ՌԴ և ՀՀ-ՀԱՊԿ փոխհարաբերությունները Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության փոխակերպման ներկա փուլում, Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը, Երևան, «Գիտություն», 151–235:
Ghevondyan A. 2024, RA-RF and RA-CSTO Relations at the Current Stage of the Transformation of the Balance of Power in the South Caucasus, The Transformation of the Balance of Power in the South Caucasus Region and the Artsakh War of 2020, Yerevan, Gitutyun, 151–235 (in Armenian).

13. Ղևոնդյան Ռ. 2020, Հայ-ռուսական հարաբերությունների աշխարհաքաղաքական ենթատեքստը, 24 փետրվարի, https://www.1inam/2707096.htm (ներբեռնման օրը՝ 11.03.2025):
Ghevondyan R. 2020, The Geopolitical Context of Armenian-Russian Relations, February 24, https://www.1in am/2707096.htm (Accessed on: 11.03.2025) (in Armenian).

14. Մարտիրոսյան Ա. 2012, Ինչու Ռուսաստանը և ռուսական կապիտալը. ինչպես են զարգանում հայ-ռուսական տնտեսական հարաբերությունները, «Ազգ», 28 փետրվարի:
Martirosyan A. 2012, Why Russia and Russian Capital: How Armenian-Russian Economic Relations Are Developing, "Azg", February 28th (in Armenian).

15. Մուշեղյան Տ. 2023, Ադրբեջանի զինված ուժերը 139 քառակուսի կիլոմետրի վրա ՀՀ ինքնիշխան տարածքում են. ԳՇ պետ, «Արմենպրես», 28 ապրիլի:
Musheghyan T. 2023, The Armed Forces of Azerbaijan are on 139 Square Kilometers of the Sovereign Territory of the Republic of Armenia. Chief of the General Staff, "Armenpress", April 28 (in Armenian).

16. Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ 2017, Մոսկվա:
Russia-Armenia Friendship, Verified for Centuries: Catalog of the Historical and Documentary Exhibition 2017, Moscow (in Armenian).

17. Ռուսական կապիտալը՝ Հայաստանի լոկոմոտիվն է 2008, 22 հունվարի, www.newsa rmenia.ru (ներբեռնման օրը՝ 11.03.2025):
Russian Capital is the Locomotive of Armenia 2008, January 22, www.newsarmenia.ru (Accessed on: 11.03.2025):

18. Ռուսաստանը և Հայաստանը համաշխարհային և տարածաշրջանային քաղաքականության համատեքստում. Հիմնախնդիրներն ու հեռանկարները. Վերլուծական զեկույց 2010, Մոսկվա-Երևան, Եվրասիական հետազոտությունների ինստիտուտ:
Russia and Armenia in the Context of Global and Regional Politics: Key Issues and Prospects. Analytical Report 2010, Moscow-Yerevan, Institute of Eurasian Studies (in Armenian).

19. Սուքիասյան Ն. 2020, ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքային գործոնների տեսականացման փորձ և այդ գործոնների ազդեցության էվոլյուցիան, Գիտական Արցախ, N 4/7, 61–72:
Sukiasyan N. 2020, An Attempt to Theorize the Structural Factors Influencing the Pro-Russian Direction of the RA Foreign Policy and the Evolution of the Impact of these Factors, Scientific Artsakh, N 4/7, 61–72 (in Armenian).

20. Քոչարյան Ռ. 2021, «Գույք պարտքի դիմաց» գործընթացը կապ չունի ոչ ՀԱԷԿ-ի, ոչ երկաթուղու հետ, 11 հունիսի, https://news.am/arm/news/648417 (ներբեռնման օրը՝ 11.03.2025):
Kocharyan R. 2021, The Process of "Property for debt" has Nothing to do with either the Armenian Nuclear Power Plant or the Railway, June 11, https://news.am/arm/news/648417 (Accessed on: 11.03.2025) (in Armenian).

21. Александров М.В. 2010, Битва за Кавказ 2004–2008. Институт стран СНГ в борьбе за национальные интересы России на Южном Кавказе, Москва, Институт стран СНГ.
Aleksandrov M.V. 2010, Battle for Caucasus 2004–2008. Institute of CIS Countries in the Struggle for National Interests of Russia in the South Caucasus, Moscow, Institute of CIS Countries (in Russian).

22. История дипломатических отношений России и Армении 2006, 30 октября, ria.ru (дата обращения: 12.03.2025).
The History of Diplomatic Relations between Russia and Armenia 2006, October 30, ria.ru (Accessed on: 12.03.2025) (in Russian).

23. Минасян С. 2005, В контексте проблем в региональной безопасности, Военно-промышленный курьер, 8 июня, N 20, http://vpk-news.ru/articles/1414 (Дата обращения: 12.03.2025).
Minasyan S. 2005, In the Context of Problems in Regional Security, Military-Industrial Courier, 8 June, N 20, http://vpk-news.ru/articles/1414 (Accessed on: 12.03.2025) (in Russian).

24. Министерство экономического развития Российской Федерации: внешнеэкономическая деятельность, двустороннее сотрудничество, экономическое сотрудничество со странами СНГ, справка по Республике Армения 2008, 15 сентября, www.economy.ru (дата обращения: 12.03.2025).
Ministry of Economic Development of the Russian Federation: Foreign Economic Cooperation, Economic Cooperation with the CIS Countries, Reference for the Republic of Armenia, September 15, 2008.www.economy.ru (Accessed on: 12.03.2025) (in Russian).

25. Стратегия национальной безопасности Республики Армения 2007, http://www.mil.am /rus/index.php?pag=49m (дата обращения: 12.03.2025).
The Strategy of National Security of the Republic of Armenia 2007, http://www.mil.am/rus/index.php?pag=49m (Accessed on: 12.03.2025) (in Russian).

26. Шакарянц С. 2002, Вопросы коллективной безопасности СНГ и Армения, Ориентиры внешней политики Армении, Ереван, Центр стратегического анализа «Спектр», 95–115.
Shakaryants S. 2002, The Issues of Collective Security of the CIS and Armenia, Landmarks of the Foreign Policy of Armenia, Yerevan, Center of Strategic Analysis "Spectrum", 95–115 (in Russian).

27. Results of the Activities of the Government of the Republic of Armenia for 2007–2011, Communication Sector 2011, May 13, report.gov.am (Accessed on: 12.03.2025).